

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 192-Ա

14 հուլիսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հուլիսի 13-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողին պատկանող մասնաճյուղի (հասցեում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) Ա/Ձ «Էրիկ Աղաջանյան», Սյունիքի մարզ, ք. Գորիս, Մ.Խորենացի 2 (ՀՎՀՀ 77925452).
- 2) «Ավտոգազ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Սիսիան-Գորիս խճուղի 2 (ՀՎՀՀ 00842235).
- 3) Ա/Ձ «Մելանյա Բեգլարյան», Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Գայի 1բ (ՀՎՀՀ 77930081).
- 4) «Սալ-քար գազ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Քրիստափորի 1ա (ՀՎՀՀ 09210673).
- 5) «Սուլավա-S.A.U.» ՍՊԸ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Շիրակի 1 (ՀՎՀՀ 09210012):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոլյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 14/07/20 18:58:59 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**